

**ΥΠΟΥΡΓΕΙΟ ΠΑΙΔΕΙΑΣ, ΠΟΛΙΤΙΣΜΟΥ, ΑΘΛΗΤΙΣΜΟΥ ΚΑΙ ΝΕΟΛΑΙΑΣ  
ΔΙΕΥΘΥΝΣΗ ΜΕΣΗΣ ΓΕΝΙΚΗΣ ΕΚΠΑΙΔΕΥΣΗΣ**

**ΕΝΙΑΙΑ ΓΡΑΠΤΗ ΑΞΙΟΛΟΓΗΣΗ ΤΕΤΡΑΜΗΝΩΝ 2022-23**

**Α΄ ΤΑΞΗ ΛΥΚΕΙΟΥ**

**ΗΜΕΡΟΜΗΝΙΑ 26.05.2023**

**ΕΞΕΤΑΖΟΜΕΝΟ ΜΑΘΗΜΑ: ΑΡΜΕΝΙΚΑ (Α΄ ΣΕΙΡΑ)**

**ΚΩΔΙΚΟΣ ΜΑΘΗΜΑΤΟΣ: Α012**

**ΟΔΗΓΟΣ ΔΙΟΡΘΩΣΗΣ**

**ΣΥΝΟΛΙΚΗ ΔΙΑΡΚΕΙΑ ΓΡΑΠΤΗΣ ΕΞΕΤΑΣΗΣ: 135 λεπτά Ο ΟΔΗΓΟΣ  
ΔΙΟΡΘΩΣΗΣ ΑΠΟΤΕΛΕΙΤΑΙ ΑΠΟ ΔΩΔΕΚΑ (12) ΣΕΛΙΔΕΣ**

# 1 ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ԸՄԲՈՆՈՒՄ ԵՒ ԼԵԶՈՒԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (30 նիշ)

Ուշադրութեամբ կարդացէք հետեւեալ հատուածը եւ պատասխանեցէք հարցումներուն:

Ձկնորսութեան եւ անհոգ թափառումի այս օրերը վերջ կը գտնեն յանկարծ: Դպրոց պիտի մտնենք: Ճերմակ օձիքով ակնոցաւոր պարոնը իր այցելութիւններէն մէկուն ընթացքին կը կանչէ մայրիկները եւ բարձրաձայն կը յայտարարէ.

- Մասնաւոր կարգադրութիւն ըրած ենք ձեր զաւակները վարժարան ընդունելու: Անոնք պէտք է գրել-կարդալ սորվին ու մարդ դառնան. . .

Մայրիկները չորս կողմէ կը սկսին օրհնել ու երկար կեանք մաղթել մարդուն եւ կարգադրութիւն ընողներուն: Բոլորին երազն է դպրոցը . բոլորն ալ հակառակ են մեր ձկնորսութեան:

Մեզմէ ոմանք, ինչպէս ես, երբեք դպրոց չեն գացած. ես գոնէ տառերը կը ճանչնամ՝ շնորհիւ հայրիկի աւանդած տառապալից դասերուն: Ուրիշներ <<այբը սանտր կը կարծեն>>, ինչպէս կ'ըսէ Մարիամ քոյրիկ իր տղուն համար: Դպրոցի մասին լաւ բաներ չենք լսած. կ'ըսեն թէ հոն աշակերտները կը ծեծեն եւ ուրիշ տեսակ-տեսակ պատիժներու կ'ենթարկեն: Ժամերով ծունկի կը բերեն, անօթի կը ձգեն, մութ սենեակը կը բանտարկեն:

- Մի հաւատար, - կ'ըսէ հաճի մաման՝ գլուխս շոյելով, - պիտի տեսնես՝ դպրոցը լաւ տեղ է, շատ պիտի սիրես:

- Հապա պատիժնե՞րը, - հարց կու տամ թերահաւատ:

- Ատոնք ծոյլերուն եւ չարերուն համար են:

Ես չար չեմ վստահաբար: Թող Եղիա՛ն մտահոգուի: Պատկած տեղն անգամ չարութեան մասին կը մտածէ եւ ծեծ կ'ուտէ մամայէն:

Գալով ծուլութեան, ինչ մեղքս պահեմ՝ կը վախնամ քիչ մը:

Ժամերով նստած դաս սերտելը սարսափելի բան է, երբ դուրսը արեւ կայ, ծով կայ եւ ծովուն մէջ պար բռնող ձուկեր կան. . .

Մեր կամքը հարցնող չկայ սակայն: Որոշուած է. մենք դպրոց պիտի երթանք: Մայրիկները գործի վրայ են: Իրար նայելով, իրարու խորհուրդ հարցնելով զանազան պատրաստութիւններ կը տեսնեն: Շապիկ, գուլպայ, կօշիկ: Պայուսակի փոխարէն կը կարուին մէկ մէկ տոպրակ, հաստ կտորէ: Այդ տոպրակները կը կախենք մեր ուսերէն եւ մէջը կը դնենք ինչ որ տան դպրոցէն - գիրք, տետրակ:

Մուշեղ Իշխան << Մնաս Բարով Մանկութիւն >>

Ա - Ի՞նչ յատուկ կարգադրութիւն եղած է երեխաներուն համար: Ո՞վ է այդ մասին լուրը յայտնողը: Մայրիկները ուրա՞խ են այդ մասին լսելով: Գտե՞ք ձեր խօսքը հաստատող նախադասութիւն մը եւ գրեցե՛ք:  
/5 նիշ/

1

Ա - Յատուկ կարգադրություն եղած է երեխաներուն դպրոց ընդունելու:

- Ճերմակ օձիքով ակնոցաւոր պարոնը կը յայտնէ լուրը:
- Մայրիկները ուրախ են այդ մասին լսելով:
- Մայրիկները կը սկսին օրհնել ու երկար կեանք մաղթել մարդուն եւ կարգադրություն ընողներուն:
- Բոլորին երազն է դպրոցը:

/3 նիշ բովանդակութիւն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտութիւն 0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

Բ - Երեխաները իմանալով դպրոց երթալու մասին, ի՞նչ մտահոգութիւններ կ'ունենան: Ձեր խօսքը հաստատելու համար երեք (3) նախադասութիւններ գտէք եւ գրեցէք հատուածէն: /5 նիշ/

Բ - Երեխաները կը մտահոգուին որովհետեւ ոմանք երբեք դպրոց չեն գացած:

- Դպրոցի մասին լաւ բաներ չեմ լսած:
- Կ'ըսեն թէ հոն աշակերտները կը ծեծեն:
- Ժամերով ծունկի կը բերեն, անօթի կը ձգեն:

/ 3 նիշ բովանդակություն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտություն  
0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի  
համար/

Գ - Հեղինակը կը գրէ. <<Անոնք պէտք է գրել - կարդալ սորվին ու  
մարդ դառնան. . . >>: Համաձայն էք այս խօսքին հետ: Բացատրեցէք  
ինչու՞: (60 բառի շուրջ) /8 նիշ/

Գ - Տալ անձնական կարծիք եւ բացատրել:  
/6 նիշ բովանդակություն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտություն  
0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի  
համար/

Դ - Լեզուական աշխատանք - բառագիտություն  
  
Հետեւեալ նախադասություններուն մէջ ընդգծուած բառերուն տեղ դրէք  
նոյն իմաստը ունեցող այլ բառ մը: /3 նիշ/

- Ես գոնէ տառերը կը ճանչնամ՝ շնորհիւ հայրիկի աւանդած  
տառապալից դասերուն:
- Ժամերով նստած դաս սերտելը սարսափելի բան է:
- Իրարու խորհուրդ հարցնելով զանազան  
պատրաստություններ կը տեսնեն:

Դ - Բազմաչարչար

- Սորվիլը

- Խրատ

/Ճիշդ հոմանիշ մը եթէ ուղղագրական սխալ ունի պիտի պակսի  
0.25 նիշ/

Ե - Ընտրեցէք ճիշդ բառը սինակէն եւ դրէք յարմար  
նախադասութեան մէջ: / 9 նիշ/

Ուղղութիւններուն	19 ըդ դարուն հայութեան արեւելահայ եւ _____ հատուածներուն մէջ, _____ շատոնց դարձած էր ժողովուրդին անհասկնալի լեզու, բայց դեռ կը գործածուէր _____ կողմէ:
Պահպանողականներու	Որոշ _____ մտաւորականներ կը շեշտէին
Գործնական	_____ լեզուով գրելու կարիքը. բայց անիկա այնքան
Արեւմտահայ	_____ էր եւ անմաքուր, որ քիչեր կը հաւատային այդպիսի
Յառաջադէմ	կարելիութեան մը՝ նոյնպէս եթէ յայտնօրէն, գրաբարի յամառ _____ էր
Անմշակ	անոր անմշակ մնալուն բուն պատճառը:
Պահպանումն	Հակադրումն ու պայքարը բուն էին երկու _____ միջեւ:
Գրաբարը	
Խօսակցական	

	<p>Խաչատուր Աբովեան քաջութիւն ունեցաւ  հարցին տալու _____  լուծում: Գրեց վէպ մը Երեւանի  խօսակցական լեզուով:</p>
--	--

Ե

Արեւտահայ

Գրաբարը

Պահպանողականներու

Յառաջադէմ

Խօսակցական

Անմշակ

Պահպանումն

Ուղղութիւններուն

Գործնական

/Ճիշդ ընտրուած բառը եթէ ունենայ ուղղագրական սխալ պիտի  
պակսի 0.25 նիշ/

**2 - ՆԻԻԹԻ ԸՄԲՈՒՆՈՒՄ ԵՒ ԼԵԶՈՒԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**/30 նիշ/**

Ուշադրութեամբ կարդալէ ետք հատուածը պատասխանեցէք  
հարցումները:

Մենեակի լուսամուտներից՝ երեւում էին կանաչազարդ հովիտը եւ լեռները, պատած՝ խիտ անտառներով: Վայրի բնութիւնը, մարդու աշխատասէր ձեռքի տակ, հրաշալի կերպարանք էր առել:

- Այդ բոլորը տնկուել են գիւղացիների ձեռքով. . . :

- Այո, շատ բան փոխուեց. . . առաջ այստեղ ճանապարհ անգամ չկար, իսկ այժմ ամեն տեղ կը տեսնէք հարթ ճանապարհներ, որոնք միացնում են մեր երկրի բոլոր քաղաքները, այդ ճանապարհների վրայ սլանում են կառքեր: Մենք հազարաւոր մղոններ հեռու արտահանում ենք մեր երկրի արդիւնաբերութիւնը՝ փայտեղէն, հանածոներ, տնային իրեր, մեքենաներ, եւ փոխարէնը ստանում ենք՝ ինչ որ մեզ պէտք է:

- Ձեր որդիները ինչո՞վ են պարապում:

- Մէկը անտառապահ է միեւնոյն անտառների, որ տեսնում էք. մէկը դասախօս է Կարինի համալսարանում. երրորդը գնդապետ է Վանի զօրաբաժնի մէջ, իսկ չորրորդը դեռ սովորում է Նոր-Բագրեւանդի գիւղատնտեսական ուսումնարանում:

- Այս կողմերում չեմ յիշում այդպիսի քաղաք:

- Դա հին Բայազէդն է: Մեր քաղաքներից, գիւղերից եւ գաւառներից շատեր անուն են փոխել: Մի քանիսը իրանց վաղեմի պատմական անուններն են կրում, ուրիշներ նոր անուններ են ստացել:

Տանտէրը ձեռքն առեց լրագիրը, նա կարդում էր մի յօդուած, որը, որպէս երեւում էր, հետաքրքրում էր նրան: Վարդանը հարցրեց.



- Ի՞նչ նորություն կայ:

- Վաղը մայրաքաղաքում ունենալու ենք Ազգային Ժողովի նիստ.

մի քանի վիճելի հարցեր պետք է քննութեան ենթարկուեն. . .

Զգիտեմ ինչո՞վ կը վերջանայ. . . կուսակցությունները յուզուած են. . .

.

Խօսակցութիւնից երեւաց, որ հիւրընկալը, այդ հովիտի

գիւղացիներից ընտրուած, Ազգային Ժողովի երեսփոխան էր:

Վարդանը շնորհակալութիւն յայտնեց, եւ կամենում էր հեռանալ:

- Եթէ կը ցանկանաք տեսնել մեր գիւղում մի քանի

հիմնարկութիւններ,- ասաց տանտէրը,- ես սիրով կ'առաջնորդեմ

ձեզ:

Վարդանը եւ իր հիւրընկալը գնում էին գիւղի փողոցով:

Բաֆֆի <<Խենթ >> ին Երազը

Ա - Սենեակի պատուհանէն ի՞նչ կարելի էր տեսնել: Իսկ մարդու աշխատասիրութեան մասին խօսք կա՞յ: Գտէք տուեալ տողը ու գրեցէք հաստատելու ձեր խօսքը: / 6 նիշ/

2 Ա - Կարելի է տեսնել կանաչազարդ հովիտը, լեռները, խիտ անտառներով:

- Այո, կայ:

- Վայրի բնութիւնը, մարդու աշխատասէր ձեռքի տակ, հրաշալի կերպարանք էր առել:

/ 4 նիշ բովանդակություն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտություն  
0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի  
համար/

Բ - Գրուածէն ի՞նչ կը հասկնանք, երիտասարդ հերոսները ուսման եւ  
աշխատանքի հանդէպ սէր ունի՞ն: Երեք (3) փաստեր յիշեցէք  
հաստատելու ձեր խօսքը: /6 նիշ/

Բ

- Այո ուսման եւ աշխատանքի հանդէպ սէր ունին:
- Մէկը դասախօս է Կարինի համալսարանը:
- Մէկը անտառապահ է:
- Մէկը գնդապետ է Վանի զօրաբաժնի մէջ:
- Միւր ուսանող է Բագրեւանդի գիւղատնտեսական  
ուսումնարանը:

/4 նիշ բովանդակություն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտություն  
0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի  
համար/

Գ - Տանտերը երկրին ու ազգին վիճակով ու գործերով հետաքրքրուա՞ծ  
քաղաքացի է: Ձեր խօսքը հաստատեցէք հատուածէն երեք (3) փաստեր  
գրելով: /6 նիշ/

Գ

- Այո, հետաքրքրուած քաղաքացի է:
- Ընտրուած Ազգային Ժողովի երեսփոխան է:
- Կը տեղեկացնէ թէ պիտի ունենան Ազգային Ժողովի նիստ:
- Մի քանի վիճելի հարցեր քննութեան պիտի ենթարկեն:

/4 նիշ բովանդակութիւն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտութիւն  
0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի  
համար/

Դ - Գիւղացիներուն աշխատանքը ի՞նչ փոփոխութիւններ բերած էր  
գիւղին, քաղաքներուն եւ երկրին համար: Ձեր կարծիքով  
ընդհանրապէս յառաջդիմութեան եւ բարեփոխման համար  
աշխատանքը կարելո՞ր է: Բացատրեցէ՛ք ձեր խօսքը: ( 60 բառի շուրջ) /9  
նիշ/

Դ

- Աշխատանքը շատ բան փոխած է:
- Շինուած են ճամբաներ, որոնք կը միացնեն երկրին բոլոր  
քաղաքները:
- Ճամբաներուն վրայ կառքեր կը սլանան:
- Մինչեւ հեռուներ կ'արտահանեն երկրի արդիւնաբերութիւնը:
- Վերջին մասը տալ ինքնուրոյն պատասխան եւ բացատրել:

/ 6 նիշ բովանդակություն 3 նիշ կառուցուածք եւ արտայայտություն  
0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր սխալի համար/

Ե - Հետեւեալ նախադասութիւններուն ընդգծուած բայերը գրեցէք  
Անցեալ Կատարեալ ժամանակով: / 3 նիշ/

Ան կը նպաստէր հայ պատանիներու դաստիարակութեան:

Երգիծաբանը կը ներկայացնէր մարդոց սխալ սովորութիւնները:

Անոնք կը զբաղէին աշակերտութեան ուսման վերաբերող  
նիւթերով:

Ե - Նպաստեց

- Ներկայացուց

- Զբաղեցան

/ Ճիշդ ժամանակով, դէմքով ու թիւով գրելու բայց ուղղագրական  
սխալ կատարելու պարագային պիտի պակսի 0.25 նիշ  
իւրաքանչիւր բառէ/

### **3 - ՇԱՐԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (40 նիշ)**

Ա - Գրեցէք ձեր նախորդ ամառնային արձակուրդէն օրուայ մը  
մասին, որ մնացած է յիշողութեան մէջ: (140 բառ) /20 նիշ/

Բ - «Այբուբենն չէ՛ սա, բե՛րդ է անմատոյց, գանձ է աննուաճ, դուռ է փրկութեան»:

Գրեցէք ձեր մտածումները, թէ ինչո՞ւ կարելու է իւրաքանչիւր աշակերտ շատ լաւ սորվի իր մայրենի լեզուն: (140 բառ) /20 նիշ/

### **3 - ՇԱՐԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

Ա եւ Բ

Իւրաքանչիւր նիւթով կ՛ալնկալուի զարգացնել իրենց մտածումները ու զգացումները:

/Իւրաքանչիւր նիւթ 20 նիշ հետեւեալ բաժանումով՝ 6 նիշ բովանդակութիւն 5 նիշ կառուցուածք 6 նիշ արտայայտութիւն 3 նիշ ուղղագրութիւն, իւրաքանչիւր 5 ուղղագրական սխալի համար պիտի պակսի 1 նիշ/

Ուշադրութիւն դարձուցէք ուղղագրութեան եւ ձեռագիրի մաքրութեան:

**ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ**